

4091

281.6

U-11

1885

Handwritten text at the top center, possibly a signature or date, appearing as "m. n. f."

2010

10

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

ՎԱՍՆ

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՄԱՏՈՒՑԵՍԼ

Ա. Ռ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1885



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸՆԱՆ

1885

281.6
U-11

281.6
Ս-11

ՏԵՂ ԻԿԱԳԻՐ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

ՎԱՍՆ

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՄԱՏՈՒՅԵԱԼ

Ա. Ռ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1885



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸՆԱՆ

—
1885

11035

ԾԱՆՈԹԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի Ազգ. երեսի. ժողովոյ

Ս. Երուսաղէմի Աթուոյն Միաբանական Ընդհանուր ժողովն Միաբանութեան Կանոնադրին 23րդ. յօդուածին տրամադրութեանց համաձայն Պատրիարքական եօթներքին և երեքին ընտրեցեաց կրկին ցուցակներն պատրաստած և տեղեկագրով մը հաղորդած է, հարկ եղած շլիսաւոր տեղեկութիւնները տալով իւրաքանչիւր ընտրելոյ նկատմամբ :

Ազգ. Կեդրոնական Վարչութեան խառն ժողովն սոյն տեղեկագիրն ուշադրութեան առնելով՝ փութաց ի գործ դնել Սահմանադրութեան 23րդ. յօդուածին տրամադրութիւնն, և ընդունելի դտաւ ներկայացեալ ցանկերն . հետեւապէս ընդ գրոյս կը մատուցանէ Պատկառելի ժողովոյդ Միաբանական Ընդհանուր ժողովոյ տեղեկագիրն, որպէս զի բարեհաճի ձեռնարկել Պատրիարքական ընտրութեան :

Ի գիմաց Ազգ. Կեդրոնական Վարչութեան

Կրօնական ժողովոյ

Քաղաքական ժողովոյ

Ատենապետ
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Վ. Ատենադպրի
ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ

Ատենապետ
Յ. ՆՈՒՐԵԱՆ

Ատենադպիր
Յ. ՊՅԱՃԵԱՆ

17 Հոկտեմբեր 1885
Կ. Պօլիս



6440
39



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

Վ.Ա.Ս.Ն

ՊԱՏՐԻԱՐԳԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՄԱՏՈՒՑԵԱՆ, ԱՌ. ԱԶԳԱՅԻՆ ԺՊՂՈՎՆ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր

Նախագահ Աղգային Երեսփ. Ժողովոյ Հայոց Թուրքիոյ,

Միաբանական Ընդհ. Ժողովս յետ կատարման եօթնօրեայ պաշտաւանց և հոգեհանգստեան իւր երջանկայիշատակ Նախագահին Տ. Եսայեայ Հոգեւոյս Ս. Պատրիարքի, ՚ի Յն Սեպտեմբերի գումարուելով (նիստ Ե) Ձեր Բարձր Սրբազնութեան և Աղգ. Ժողովոյ միթարական հեռագրոց և յայանած վշտակցութեանց մասին՝ երախտագիտութիւն արտայայտելէ յետոյ, ըստ տրամադրութեան 27րդ. Յօդուածոյ Կանոնադրի Միաբանութեան՝ Պատրիարքական Տեղակալի ընտրութիւնն կատարեց գաղտնիքովէն ըստ քանոնադրութեան, զոր անմիջապէս Սեպտ. 3 թուակիր հեռագրաւ հաղորդելով Ձեր Բարձր Սրբազնութեան՝ վաւերացումն ընդունեց Ձեր Սրբազնութեան Սեպտեմբեր 12 պաշտօնական հեռագրաւն:

Յետ այնորիկ, Միաբանական Ընդհ. Ժողովս, որ յօրէ վշտառիթ մահուան Ս. Պատրիարք Հօրն՝ կէտ առ կէտ հետեւած էր Կանոնադրի այս մասին վերաբերեալ տրամադրութեանց, նկատողութեան առնելով Ս. Աթոռոյս ներկայ տաղնապալից վիճակը և Պատրիարքական ընտրութեան երկարաձգման վտանգաւոր հետեւանքը, անհրաժեշտ դատեց կարելի եղածին չափ փութացնել Պատրիարքական ընտրեւեաց քուէարկութիւնը. ուստի յ30ն Սեպտեմբերի (նիստ 2) գումարուեցաւ իւր ամբողջ 46 անդամներէն՝ 26 ներկայութիւն և անձամբ ներկայ չգտնուողներէն 9 անդամաց քուէներն ունենալով:

Միաբանական Ընդհ. Ժողովս, յիշեալ նստին մէջ Նախագէս՝ Ձեր Բարձր Սրբազնութեան Սեպտ. 3 և 227 թիւ պաշտօնագիրն շնորհակալութեամբ ընթերցաւ. որով կրկնելով Հոգեւոյս Ս. Պատրիարքի վշտառիթ մահուան առթիւ ազգովին եղած թախծութիւնն՝ կը յորդորէիք ըստ Միաբանական Կանոնադրի՝ ամեն բան Կանոնաւորութեամբ կատարել և փութացնել Պատրիարքական ընտրութիւնն: Եւ ապա Միաբանութեան Կանոնադրի՝ Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ 29րդ. յօդուածն յապենի ժողովոյ ընթեռնելով, քուէարկութիւնն կատարուեցաւ և առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով՝ Աւագի յոյսի — Երեմիէն ընտրեւեաց պատրաստուեցաւ, որ է հետեւեալն՝

Ա. Տ. Յարութիւն Սրբազան Արք-Եպիսկ. Վեհապետեան	31 քուէ
Բ. Տ. Երեմիա Եպիսկոպոս Տ. Սահակեանց	30 »
Գ. Տ. Աստուածատուր Եպիս. Տ. Յովհաննէսեանց	24 »
Դ. Տ. Մամբրէ Վարդապետ Մարկոսեան	24 »
Ե. Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան	21 »
Զ. Տ. Սահակ Վարդապետ Խապայեան	21 »
Է. Տ. Ղեւոնդ Վարդապետ Մաքսուտեան	21 »

Իսկ երկուրդ յոյսի — Երեմիէն ընտրեւեաց պատրաստուելու քուէարկութիւնն կատարուեցաւ յաջորդ օրն՝ ՚ի Կն Հոկտեմբերի (նիստ Է) վերոյիշեալ ներկայութեամբ, որով յիշեալ եօթնեքին ընտրեւեաց ցուցակին մէջէն միայն երեք անձի վրայ ամփոփեցան քուէներն և քուէհամարն հետեւեալ արդիւնքը ունեցաւ.

Ա. Տ. Յարութիւն Սրբազան Արք-Եպիսկ. Վեհապետեան	18 քուէ
Բ. Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան	19 »
Գ. Տ. Երեմիա » Տ. Սահակեանց	16 »
Դ. Տ. Սահակ Վարդապետ Խապայեան	16 »

Սոյն վերջի երկու ընտրեւեաց քուէից հաւասարութեան պատճառաւ վիճակ ձգուելով, Արժ. Սահակ Վարդապետն անցաւ երկրորդ ընտրեւեաց ցուցակին մէջ:

Գալով յիշեալ եօթնեքին ընտրեւեաց հանգամանայ, Միաբանական Ընդհ. Ժողովս համառօտիւ կը ներկայացնէ աստ իւրաքանչիւրին վերաբերեալ գլխաւոր տեղեկութիւններն և Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօնները:

Ա. — Ամեն. Տ. Տ. Յարութիւն Ս. Արք-Եպիսկոպոս Վեհապետեան, այժմեան Պատրիարք Կ. Պօլսոյ (*):

Բ. — Տ. Երեմիա Եպիսկոպոս Տ. Սահակեանց Քարբերդցի, Օսմանեան հպատակ՝ 58 տարեկան. Միաբան եղած է 1848 թուականին, Սարկաւազ (1853) և Վարդապետ (1857) ձեռնադրուած է հոգեւոյս Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքէն և Եպիսկոպոսութեան աստիճան ընդունած է 1872ին երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսէն: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ զրազրութիւն 1855-64, ժամասացութիւն 1858-64, Յոպպէի Տեսչութիւն 1864-66, Դարպասընկալութիւն 1866-68, և 1882-85 Նուիրակութիւն ի Ռուսաստան և ի Պարսկաստան 1868-72. Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1861-64 և 1875-79 և ներկայ տարեշրջանին սկիզբէն ի վեր կը վարէ Պատր. Փոխանորդութեան պաշտօնը և յետ մահուան Տ. Եսայի Պատրիարքի՝ Պատրիարքական Տեղակալութեան պաշտօնը:

Գ. — Տ. Աստուածատուր Եպիսկ. Տ. Յովհաննէսեանց Քարբերդցի, Օսմանեան հպատակ, 55 տարեկան, Միաբան եղած է 1851 թուականին. Սարկաւազ (1853) և Վարդապետ (1857) ձեռնադրուած է հոգեւոյս Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքէն և Եպիսկոպոսութեան աստիճան ընդունած է 1876ին՝ երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. Ս. Կաթողիկոսէն: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ Տեսչութիւն ի Վերիառն 1860-61, ի Յոպպէ 62-64. ժամասացութիւն 1866-67. մասնաւոր պաշտօն յԱյնթապ, ի Բերիա և յԱտանա 1866ին. Տեսչութիւն կալուածոց ի Դաշիրէ 1869-70. Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1865-69 և 74-78, Դատական դործոց տեսչութիւն 1874-77. Ընդհ. Ժողովոյ Ատենապետութիւն 1875-76, զոր այժմ ևս կը վարէ ներկայ տարեշրջանի սկիզբէն ի վեր:

Դ. — Տ. Մամբրէ Վարդապետ Մարկոսեան Արաբկիրցի՝ Օսմ. հպատակ, 55 տարեկան, Սարկաւազ և Վարդապետ ձեռնադրուած է 1871ին հոգեւոյս Տ. Եսայի Ս. Պատրիարքէն: Նախ քան եկեղեցական աստիճան ընդունիլն՝ 1857-68 աշխարհական վիճակաւ՝ դասատուութիւն ըրած է Ս. Աթոռոյս մէջ. իսկ յետ վարդապետութեան՝ դասատուութիւն և Ուսումնական Խորհրդոյ անդամակցութիւն 1871-74. Կալուածոց տեսչու-

(*) Վեհապետեան Սրբազանի վարած Ազգ. պաշտօնները թէ՛ ի Կ. Պօլսոյ և թէ՛ ի Կարին և ի զանազան գաւառոս տրոգէն ծանօթ են: Իսկ Կարնոյ առաջնորդութենէն հրաժարելով՝ 1880ին ի Ս. Աթոռոս վերադառնալէն յետոյ, 1881էն սկսեալ Պատրիարքական Փոխանորդութեան պաշտօնն վարեց մինչև ց'արժանաւոր ընտրութիւն իւր ի Պատրիարքութիւն Կ. Պօլսոյ:

թիւն ի Դաշիրէ 1878-79, Տեսչութիւն ի Դամասկոս 1879-80, և այժմ նուիրակ է ի Ռուսաստան 1881էն ի վեր. և որում ներկայ ամի Յուլիս ամսոյն մէջ տրուեցաւ վճայադիր Եպիսկոպոսութեան՝ Միաբանական Ընդհանուր Ժողովէն:

Ե. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան Կէյվէցի, Օսմանեան հպատակ, 58 տարեկան. միաբան եղած է 1850ին. Սարկաւազ (1855) և Վարդապետ (1857) ձեռնադրուած է հոգեւոյս Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքէն, և Եպիսկոպոսութեան աստիճան ընդունած է 1867ին երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. Ս. Կաթողիկոսէն, որում ուղեկից եղած էր յանուն Ս. Աթոռոյս Պատրիարքի և Միաբանութեան: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ շինուածապետութիւն և հանդերձապետութիւն 1855-59, Տեսչութիւն ի Յոպպէ 1859-60. Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1861-62 և 72-74, Ընդհ. Ժողովոյ Ատենապետութիւն 1872-74, Պատրիարքական Փոխանորդութիւն ի Կ. Պօլսոյ 1864-69, այժմ ևս կը վարէ նոյն Փոխանորդութեան պաշտօնն 1874 թուականէն ի վեր, որոյ հետ մէկտեղ վարած է նաեւ Ազգային զանազան պաշտօններ ի Կ. Պօլսոյ:

Զ. — Տ. Սահակ Վարդապետ Խապայեան Քարբերդցի, Օսմանեան հպատակ, 36 տարեկան, մտած է յաշակերտութիւն ժառանգաւորաց Վարժարանին 1867ին, Սարկաւազ (1869) և Վարդապետ (1877) ձեռնադրուած է հոգեւոյս Տ. Եսայի Ս. Պատրիարքէն: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ դասատուութիւն 1871-81, Ուսումնական Խորհրդոյ (1871-74) և դպրոցաց Տեսչութեան (1874-81) անդամակցութիւն, Սիօն ամսաթերթի խմբագրութիւն (1874-78), Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1878-81. Իսկ 1881էն սկսեալ մինչև ցարդ նուիրակութիւն կընէ ի Ռուսաստան, և ներկայ ամի Մարտ ամսոյն մէջ՝ ընտրեցաւ ի պաշտօն Լուսարարապետութեան, որում Յուլիս ամսոյն մէջ տրուեցաւ նաեւ վճայադիր Եպիսկոպոսութեան՝ Միաբանական Ընդհանուր Ժողովէն:

Է. — Տ. Ղեւոնդ Վարդապետ Մաքսուտեան Դամասկացի, Օսմանեան հպատակ, 35 տարեկան. մտած է յաշակերտութիւն ժառանգաւորաց Վարժարանին 1868ին. Սարկաւազ (1869) և Վարդապետ (1867) ձեռնադրուած է հոգեւոյս Տ. Եսայի Պատրիարքէն: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ Դասատուութիւն 1871-81, Ուսումնական Խորհրդոյ (1871-74) և դպրոցաց Տեսչութեան (1874-81) անդամակցութիւն, Տաճկերէնի դրագրութիւն 1872-74 և 1877-85, Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1878-85, Հաշուակալութիւն (78-81) և այժմ կը վարէ Ելեւմէտից Տեսչութեան պաշտօնը՝ սկսեալ 1881 թուականէն:

Միաբանական Ընդհ. Ժողովն ներկայիս մատուցանելով Ձեր Բարձր Սրբազնութեան և Ազգ. Երեսի. Ժողովին՝ իւր ընտրութեան և քուէարկութեան արդիւնքը, հանդերձ կանոնական տեղեկութեամբ, վստահ է որ Ազգ. Երեսի. Ժողովն՝ կշռելով ներկայ ժամանակին, Ս. Աթուոյս տագնապալից վիճակի և ծանրագոյն խնդրոց պահանջը, կը փութացնէ իւր արժանաւոր և խղճի մտօք ընտրութիւնն՝ ի շինութիւն Ս. Տանս և 'ի փառս Ազգիս սիրեցելոյ :

Ի դիմաց Միաբանական Ընդհ. Ժողովոյ Ս. Աթուոյս

Ատենապետ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿ.

Նախագահ

Պատրիարքական Տեղակալ

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿ.

4 Հոկտեմբեր 1885

Երուսաղէմ





4092



396